




Ա Ր Ա Ր Ա Տ

ԿՐՕՆԱԿԱՆ՝ ԲԱՐՈՅԱԿԱՆ՝ ՊԱՏՄԱԿԱՆ՝ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ԹԵՄԻՒՄ ԻԵ՛ ՏԱՐԻ՛

ՀԱՄԱՐ ԵԱՍՆԵՐԱՐԳ

ՀՈԿՏԵՄԲԵՐ 1894 Թ.

ԿՐՕՆԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅ ԵԿԵՂԵՅՈՒ
ՍՈՒՐԲ ԿԱՐԳԸ.



(Հարու նախա Սիւն) *.

Ի՞նչ է միջոցով է Ս. Հոգին գործում Հայաստանեայց Ս. Եկեղեցում անփոփոխապէս և հեազհետէ, ո՞ւմ միջոցով է պահպանուում նորա միութիւնը, սրբութիւնը, ընդհանրականութիւնը և առաքելականութիւնը, և հաւասարապէս շնորհարաշխում ամենքին:

*. Տես նախընթաց համար:

Նորա միջոցն Եկեղեցու Ս. կարգն է: 1
«Գլուխ Եկեղեցւոյ է Տէր մեր Յիսուս Քրիստոս...: Եւ փոխանորդ նորա յերկրի ի Հինն՝ քահանայապետն, որպէս Ահարոն, և ի Նորս՝ Կաթողիկոսն իւրաքանչիւր ազգի: Իսկ ական տեսանող մարգարէքն, և առաքելքն ինքնատեպ բանին Աստուծոյ: Այլ և եպիսկոպոսն վերառեսուչ և ղէտ կոչի: Բերան՝ աւետարանիչքն, և լեզուք՝ քարոզք բանին կենաց: Առամուկն՝ վարդապետք և մեկնիչք և ծասիչք հոգեւոր կերակրոյն...: Ունին՝ աշակերտք ճշմարտութեան բանին: Մարմին՝ բոլոր հաւատացեալք և անդամք Քրիստոսի: Զեոք՝ քահանայք, զործիք Ս. խորհրդոցն: Եւ ոտք՝ կրօնաւորք և ապաշխարողք, որք կրեն զճանրութիւնս օրինացն»: 2

1. «Օրինադրեաց մարգարէիք, և քարոզեաց առաքելովք, և խրատէ քահանայապետիք և ժառանգաւորք Եկեղեցւոյ, զի ողջախոնացին յարդարութիւն և ի սրբութիւն և յիւրաւունս: Յաճախ. էջ. 73:
2. Դրեգոր Տաթևացի. Դիւր չարքմանց, էջ. 534:

Այս սուրբ դասակարգութեան բոլոր իշխանութիւնը Ս. Հոգու շնորհքն է, որ լիակատար է օծեալ Հայրապետի մէջ և մասնաւոր է նորա ձեռնադրութեամբ կարգ ըստ կարգի եպիսկոպոսինք, վարդապետին, արեղայինն ու քահանային և սօրկաւազինք: Աշխարհականն որ և իցէ իշխանութիւն բաց է ի բաց մերժուում է Հայոց Եկեղեցու Ս. Արքիք. այստեղ կայ միմիայն հայրութիւն և որդիութիւն, եղբայրութիւն և քոյրութիւն: Հայոց Հայրն է օծեալ Հայրապետն և բոլորը նորա որդիք, այլ և եղբարք և քոյրեր նորա հեղութեան պատճառով: Մնացածները մասնաւոր Հայրեր են և կարգակիցները, զորօր. եպիսկոպոսները ջոկ իսկ վարդապետք առանձին և այլն, եղբայրներ են և իրար վրայ ոչ մի իշխանութիւն չեն կարող ունենալ: Եթէ մերժեն Ս. Հոգու շնորհաց հաւասարութիւնն և աշխարհական իշխանութեան յենուն, կըլծեն իւրեանց իշխանութիւնն: Այս սկզբունքը հաստատեց Քրիստոս ասելով. «Վիտէք զի իշխանք ազգաց տիրեն նոցա, և մեծամեծք իշխեն նոցա: Այսպէս իցէ և ի ձերում միջի. այլ որ կամիցի ի ձէնջ մեծ լինել՝ եղիցի ձեր պաշտօնեայ. Եւ որ կամիցի ի ձէնջ առաջին լինել՝ եղիցի ձեր ծառայ: Որպէս Որդի Մարգոյ ոչ եկն պաշտօն առնուլ, այլ՝ պաշտել և տալ զանձն իւր փրկանս փոխանակ բազմաց»: ¹ Այսանորոյ և նա առաւել իշխանութիւն ունի, որ առաւելագոյն շնորհ է ստանում ձեռնադրութեամբ և կատարեալ շնորհ ունեցողն, այն է՝ Հայրապետն: ² ամենից հեղն է ³ և ամենին սպասաւոր իւր անձնադրութեամբ: Ինչպէս նա տալիս է շնորհ, այնպէս և կարող է պատժել հայրաբար և մինչև անգամ խլել այդ շնորհաց իշխանութիւնն ումից կամենայ. իսկ այդ շնորհը տալիս է նա միմիայն նոցա որոնց համար ինքն կարող է երաշխաւորել և պատասխանատու լինել նոցա մեղաց համար:

Ստորագրեալք պարսկն որդիաբար հնազանդուել և օծեալ Հայրապետի հայրական խօսքը չստանդանել, աշխարհական բուն հրամանի սպասելով. իսկ եթէ անհնազանդ կամ ընդդիմադիր և անուղղայ գտնուեն, երբէք չհասկանալով շնորհաց իշխանութեան ընթացքը, պէտք է խստիւ պատժուին իրրե Ս. Հոգու դէմ դործողներ, ըստ այնմ թէ. «Ամենայն թողցի որդւոց մարդկան, մեղք և հայհոյութիւնք որչափ և հայհոյիցեն, բայց որ հայհոյեցէ զՀոգին Սուրբ, ոչ ունիցի թողութիւն յաւիտեան, այլ պարտապան լիցի յաւիտենից մեղաց»: ¹ Որպէզ զործում են Ս. Հոգու դէմ, այնտեղ ոչ մի Հայրապետ ներելու իրաւունք չունի:

Այստեղ կ'առաջանայ մի հարցասիրութիւն, որի պատասխանը միայն տանք, մանաւանդ որ սկզբունք է մեր հեռեւեալ բոլոր տեսութեանց:

«Թէ ձեռնադրեալն իցէ անարժան՝ ոչ առնու շնորհս, այլ դատապարտի ինքն և ձեռնադրողն զի զսրբութիւն շանց ետ: Իսկ եթէ ձեռնադրողն իցէ անարժան, միայն ինքն ոչ օգտի, այլ դատապարտի իսկ շնորհն կատարի ի յընդունողն: Որպէս մինչ անարժան քահանայն պատարադէ, այլքն հաղորդին սրբութեան, այլ ինքն դատապարտի:

Իսկ եթէ երկոքին ևս իցեն անարժանք, շնորհն ոչինչ է օգուտ, այլ դատապարտութիւն լինի երկոցունցն: Զորօր. արեղական լոյսն տկար աչաց փնտիչ է և ոչ օգուտ և ջուր՝ չորացեալ անկոր: Նոյնպէս և զամենայն օրհնելիս իմա՛ արժանաւորքն օրհնել պարտին, և զարժանաւորս, և արժանապէս»: ²

Այս նկատմամբ առ այժմ՝ այսչափ:

«Տեսանեա՛ զյարմարումն և զրարձրութիւնս Եկեղեցւոյ՝ զսուրբ և զանրիժ հաւատոյն, հաւատոյն ասեմ, որոյ առաքեալք և մարդարէք և վարդապետք են նաւաւարք, ունելով նաւապետ զմարմնացեալ և զմարդացեալ Բանն Աստուծոյ»: Այսպէս է ասում Հայոց Եկեղեցու Ս. Հայրապետն: Որչափ բարձր է և աստուա-

1. Մատթ. Ի, 25:

2. «Որ մեծն է ի սոսա, ծանրագունի քեանց է ի ներքոյ, որպէս պարունակող զամենայն»: Մ. Ն. Ենդեալի. էջ. 4:

3. Տես. Ագաթանգեղոս. Թիֆլիս. էջ. 438:

1. Մարկ. Գ, 28:

2. Մ. Գ. Տաթևացի. Հարցմունք. էջ. 540:

ճային Հայոց Եկեղեցին և նորա հաստատութիւնն ու ճշմարիտ գործունէութիւնն անհրաժեշտ այնքան ծանր է նորա հոգեւոր կարգի պարտականութիւնն ու պատասխանատւութիւնը: Արդէն Ե. դարում Շահապի վանի Ս. Թորգոմբ գրում է.

«Պարա և պաշտած է նաւարարին հոգալ զարուեստագործութիւն նաւին: և զշաւիղս ծովուն նիւտել: և ըստ հոգմոյն աջոգութեան գնալ ի վերայ միանանց ծովուն: Նոյնպէս և զօրավարին յամենայն ժամ զգօրսն ի հանդիմին անցուցանել զայրբնտիր: և զձի ընտիր: զէն զարամբ սպառազէն երիվարաւ: որ և ակն ունել ի ծախատուն յաղթող գտանել: և առնուլ պսակ և պատիւ ի թագաւորէն:

Ապա առաւելապէս արժան և իրաւ է վարդապետաց Ս. Եկեղեցւոյ՝ հոգեւոյց առաջնորդաց օրինաց արդարութեան և ստոյգ պատուիրանաց Աստուծոյ կենդանւոյ յամենայն ժամ յօրէնս Տեառն խորհել ի տուէ և ի դիշերի: և զմանկունս Եկեղեցւոյ յամենայն ժամ նորավեստուր զարդարել ի Տէր:»

Մինչդեռ երբ նշանաւոր վարդապետք, մանաւանդ Ս. Սահակ և Ս. Մեսրոպ փառաւորներ Եկեղեցին սուղ էին պատճառում սմենքին, վասն զի «ոչ զք էր որ քաղեր զորոմն և սրբէր զգաղձն փնասակար: քանզի արմատացեալ էր սէղն: և տարածէր օրըստօրէ: և լինէր յաճախումն մծղնէից: և այլոց չարաց: կնահանէից: պոռնկաց: զողաց: անձնակամոց: ամենայն խտտորնակ չարագործաց յաշխարհիս Հայոց ի մէջ տանս Թորգոմայ»

Այսքան մեծ նշանակութիւն ունի և Եկեղեցու անհրաժեշտ գործիչն է եկեղեցական Ս. կարգը: Ինչ որ է Եկեղեցին և ինչ յատկութիւններ ունի միմիայն Ս. կարգով են պահպանելի և այդ Ս. կարգը պէտք է լինի դաստիարակող, քարոզող, սրբագործող և սրով հատանող:

Երբ հաստատուեց Եկեղեցին, հաստատուեց և Ս. կարգն: որի առաջինն էր առաքելական աստիճանը: Սակայն պէտք կար փոքր պաշտօնակաների, որոնք ունենալով Ս. Հոգու մաս-

նաւոր շնորհ, ըստ այնմ ևս կկատարէին իւրեանց վայել պաշտօնը: Առաքեալներն ունէին Ս. Հոգու առաւագեղ լիակատար շնորհքով փառնորդ և կարող էին մասնաւոր շնորհներով բաշխել ստորագրեալներին: Յայանի է որ առաքեալք ձեռնադրեցին եպիսկոպոսներ, զորօր Պօղոս գրում է. «Յիշեցուցանեմ քեզ արծարծել զշնորհսն Աստուծոյ, որ են ի քեզ ի ձեռնադրութենէ իմմէ:»¹ զոցա իրաւունք էին տուել և քահանաներ ձեռնադրել. «Չեւս վաղվաղակի յուրուք վերայ մի՛ գնիցես: և մի կցորդ լիցիս մեղաց օտարաց: զանձն քո սուրբ պահեծիր:»² Գիտենք և այս որ առաքեալք ձեռնադրեցին եօթը սարկաւազներ «Զորս կացուցին առաջի առաքելոցն: և աղօթս արարեալ եղին ի վերայ նոցա զձեռս:»³ Վերջապէս իմանում ենք որ Պօղոս և Բառնարաս «Չեւս նադրեցին նոցա ըստ եկեղեցեաց երկցունս:»⁴ Իսկ այս բոլորն ամփոփուած է զեղեցկապէս առաքեալի խօսքերի մէջ թէ. «Եւ յա (Քրիստոս) ետ զոմանս առաքեալս: զոմանս մարգարէս: զոմանս աւետարանիչս: զոմանս հովիւս և վարդապետս ի հաստատութիւն սրբոց: ի գործ պաշտաման: ի շինուած մարմնոյն Քրիստոսի»: ⁵

Հայաստանեայց Ս. Եկեղեցին հաւատարիմ մնալով աւետարանի վարդապետութեան, որոշում է միայն չորս դասեր իւր Ս. կարգի մէջ, այն է՝ Հայրապետ, եպիսկոպոս, քահանայ (կուսակիօն և ամուսնացած) և սարկաւազ: որոնք մշակ են Եկեղեցու:

Այդ դասերն անցնել բարձրանալ կարող են աստիճաններով, որոնց թիւն է ինն, ըստ թուին երկնային դասերի: Ահա այս Ս. կարգը զանազանութիւնք է զնում իւր դասերի մէջ, այնպէս որ Ս. Հոգու կատարեալ շնորհք ներշնչուում է Քրիստոսի առաքելական յաջորդի այսինքն օծեալ Քահանայապետի, Թագնոսի և Բարդուղիմէոսի Լուսաւորչեան աթոռի Գահակալի մէջ, իսկ ապա ձեռնադրութեամբ

1. 2. Տիմ. Ա, 6: 2. 1. Տիմ. Ե, 22: 3. Գործք. 2. 6. տես. եւ Փիլ. Ա, 1: 1. Տիմ. Ա, 8, 12: 4. Գործ. Թ, 22: 1. Տիմ. Ե, 17, 19. Տիմ. Ա, 5: 5. Եփես. Դ, 11:

բաշխում է նա այդ շնորհից իւր կախկոտութեանը, քահանաներին և սարկաւազներին: Արշափ կարողանում է Քահանայապետն իւր անձն պատրաստել և ընդունակ կացնել Ս. Հոգուն: այնքան զօրանում է նորա մէջ աստուածային շնորհն ու աջի գործունէութիւնը. նոյնպէս և որքան հաւատարիմ հնազանդ, երկիւղած է դէպի Քահանայապետը թէ Եպիսկոպոսն և թէ քահանան ու սարկաւազն: այնքան նոքա առատապէս են վայելում Քահանայապետի միջոցով փոխանցուած կամ աւանդուած շնորհները Ս. Հոգուց:

Արդ, որքան սուրբ է եկեղեցական կարգի միութիւնն և ամուրի այնքան յաջողակ կլինի Հայաստանեայց Ս. Եկեղեցու սրբութիւնը, միութիւնն, ընդհանրականութիւնն ու առաքելականութիւնը: Այդ կախում է զլիցի, ըստ որում Հայաստանեայց Եկեղեցու Քահանայապետը պէտք է պարզերես կարենայ ասել նախնեաց և իւր ստորագրեալների հետ Քրիստոսի Աստուծոյ առաջ. «պահե՛մ զնոսա յանուն քո... զի եղիցին մի, որպէս և մեր մի եմք»: Եւ նա իւր զործն պէտք է այնպէս ճշգրտութեամբ վարէ, որ ճշմարտութիւն մեծ Հայրապետի խօսքը.

«Քահանայապետն՝ որ ի սմա (յեկեղեցի) բաշխէ զշնորհս ճշմարիտս, օրինակ է մեծի Քահանայապետին, յորմէ վտակն անմահութեան Հոգին Սուրբ կեանս և անմահութիւն բաշխէ մարդկան: Եւ դասը պաշտօնէից որոշեալք ի սմա՝ երկնայնոցն դասուց զանազան ունորաց զգաս և զպաշտօն նշանակաբար ունին զօրութիւն»: ¹

Ա.

ԿԱԹՈՒԼԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ:

Կաթոլիկոս է կոչուում Հայաստանեայց Ս. Եկեղեցու ընդհանրական պետն և ի տարբերութիւն նորա ստորագրեալ մասնաւոր Կաթոլիկոսների՝ Հայրապետ է ամենայն Հայոց և Քահակալ Լուսաւորչեան առաքելական ա-

թոռին: Ընդհանրական Կաթոլիկոսը յաջորդ է առաքեալների, այն է Թադէոսի և Բարդուղիմէոսի, և ինչպէս առաքեալք՝ նոյնպէս և Կաթոլիկոսն ամբիփոխ են իւրեանց մէջ Սուրբ Հոգու բոլոր շնորհների զեղումն, որից և բաշխում են մասնաւորապէս Եկեղեցու պաշտօնեաներին: Ս. Հոգու լիառատ ներշնչումն տուաւ Քրիստոս իւր աշակերտաց ասելով. «Հոգին Սուրբ ուսուցէ ձեզ ի նմին ժամու զինչ պարտ իցէ խօսել»: ¹ «Իսկ Մխիթարին Հոգին Սուրբ զոր առաքեսցէ Հայր յանուն իմ նա ուսուցէ ձեզ զամենայն և յիշեցուցէ զամենայն, որ ինչ ասացի ձեզ»: ² Եւ որ զըլխաւորն է. «Ողջոյն ընդ ձեզ, որպէս առաքեաց զիս Հայր իմ և ես առաքեմ զձեզ: Եւ զայս իրրեւ ասաց, փչեաց ի նոսա և ասէ. Առէք Հոգի Սուրբ, Եթէ ումք թողուցուք զմեզս, թողեալ լիցի նոցա. Եթէ զուրուք ունիցիք՝ կալեալ լիցի»: ³ Միայն այդպէս զինելով նոցա, ուղարկեց քարոզելու հեթանոսաց մէջ: ⁴

Առաքեալք համոզուած էին, որ Ս. Հոգին պէտք է զօրութիւն պարգեւէր նոցա, ինչպէս յիշում է՝ «Այլ առջիք զօրութիւն ի հասանել Հոգւոյն Սրբոյ ի վերայ ձեր...»: ⁵ Ըստ որում և այդ նախապէս կատարուեց, երբ առաքեալք սպասում էին զորան, որպէս զի սպա զնային քարոզելու, «Ինն ամենեքեան միարան ի միասին: Եւ եղև յանկարծակի հրնչիւն յերկնից՝ եկեալ իրրեւ սաստիկ հողմոյ, և ելից զամենայն տունն յորում նստէին: Եւ երեւեցան նոցա բաժանեալ լեզուք իրրեւ ի հրոյ, և նստաւ իւրաքանչիւր ի վերայ նոցա: Եւ լցան ամենեքեան Հոգւով Սրբով և սկսան խօսել յայլ լեզուս, որպէս և Հոգին տայր բարբառել նոցա»: ⁶

Ահաւասիկ այսպէս զեղում է Ս. Հոգու շնորհն առաքելոց մէջ, և անցնելով նոցա յաջորդաց և կամ փոխանորդաց մէջ, կատարուում է Հայոց Հայրապետի վրայ զազաթի

1. Թ. Իմաստասէր. Մատենադարձիւն էջ. 134:

1. Գով. ԺԲ, 12: 2. Յով. ԺԴ, 26: 3. Ի, 21: 4. Մատթ. ԻԶ, 19:

5. Գործք. Ա, 8: 6. Առդ Բ, 1-5:

սուրբ օծմամբ¹ տասն և երկու եպիսկոպոսաց ձեռնադրութեամբ, որ և արժանանում է այդ բարձրութեան ըստ վիսյութեան անձին իւրոյ և ամենայն ժողովրդեան»:

«Երեք են եղանակ իմաստից, ասում Ս. Գրիգոր Տաթևացին՝ նախ բնական խելքն, որ ի բարեխառն կազմուածոց հանգիպի, որպէս էր՝ Ալիտոփիլին և Քուսեայ բարեկամին Պաւթի:

«Երկրորդ ի կրթութենէ ուսմանց, որ արաքուստ կրթութեամբ ստանայ, որպէս Պղատնին և այլոցն: Երրորդ՝ ի շնորհաց Հոգւոյն, որպէս մարգարէիցն և առաքելոցն, և որոց պարգևի մասնաւոր այս շնորհ, թէ և ոչ բոլորապէս ըստ նոցայն»:

Ծնորհի էութիւնն որոշելուց յետոյ՝ նա բացատրում է որ առաքելակերը հաւասարապէս իշխանութիւն ունէին քահանայութեան և քահանայապետութեան, նա ասում է.

«Սա զի յետ յարութեանն հաւասար ետ զիշխանութիւն, փշեաց ի նոսա և ասէ, «զոր որ կապիցէք յերկրի... ևն, և թէ գնացէք աշակերտեցէք...» որ է իշխանութիւն քահանայութեան:

«Երկրորդ՝ զի մերձ ի համբարձումն ձեռն եղ ի վերայ նոցա և օրհնեաց զնոսա և արար զնոսա առհասարակ եպիսկոպոսունս:

«Երրորդ՝ զի յետ համբարձմանն՝ յորժամ էջ Հոգին Սուրբ, արար զնոսա կաթուղիկոսունս առհասարակ: Եւ յայտ է յայսմանէ, որ կաթուղիկոսն ոչ կարէ կաթուղիկոս ձեռնադրել, այլ եպիսկոպոս առնէ: Եւ յետ փոխման առաջնոյն նստի կաթուղիկոս երկրորդ: Որպէս և Քրիստոս արար, որքան մարմնով ընդ առաքելսն էր՝ եպիսկոպոսունս արար զնոսա, և յետ համբառնալոյն Հոգովն Սրբով արար զնոսա կաթուղիկոսունս:

Զորրորդ՝ յայտ է, զի իւրաքանչիւր առա-

քեալ յիւր վիճակն ընթացեալ՝ ձեռնադրեցին եպիսկոպոսունս...»:¹

Տեսնում ենք ուրեմն որ եկեղեցական Ս. կարգի բոլոր իշխանութիւնը կենդրոնացած է կաթուղիկոսի մէջ. Ս. Հոգու լիակատար ներշնչումը նորա մէջ է գործում ուստի և նա է Քրիստոսի առաքելական փոխանորդը: Սրբանից է աւանդուում և մասնաւոր շնորհ իւրաքանչիւր ստորադրեալի և նա է բոլորի շնորհաբաշխ վարիչ զլուիւր: Ս. Հոգու շնորհն առաքելաբէին ձեռնադրութեամբ պատուաստում այլոց վրայ, որպէս իմանում ենք հէնց նոցա առաջին գործերից.

«կացին (առաքեալքն) յաղօթս ի վերայ նոցա, որպէս զի առցեն զՀոգին Սուրբ...»: Յայնժամ եղին զձեռն ի վերայ նոցա և առնուին Հոգի Սուրբ: Տեսեալ Սիմոն թէ ձեռն ի վերայ գնելով՝ առաքելոցն՝ տուեալ լինի Հոգին Սուրբ, մատոյց նոցա ինչս և ասէ. Տուք և ինձ զիշխանութիւնս զայս, զի յոյր վերայ գնիցեմ զձեռն՝ առցէ Հոգի Սուրբ:....»²

Հասկանալի է որ կաթուղիկոսն ևս պէտք է կատարեալ շնորհ ունենայ, որպէս զի մասնաւոր շնորհ բաշխել կարենայ. և քանի որ եկեղեցականութիւնն աշխարհական իշխանութիւն չէ, պարզ է՝ որ եթէ չլինի կատարեալ շնորհաբաշխողն, այլ որ չի կարող նորա տեղը բռնել:

«Ի զլուին Ահարոնի ասում Ս. Սերսէս Ծնորհալին, իջանեն շնորհք Հոգւոյն Սրբոյ՝ որ է Հայրապետութիւնն, և ի զլիւն ի մօրուսն՝ որ է եպիսկոպոսութիւնն, և ի մօրուացն ի գրապանական՝ որ է քահանայութիւնն, և ի գրապանացն ի զգեստն՝ որք են ժողովրդեանն դասք»:

Անշուշտ՝ ով որ անջատուում է զլիւնց, լինի այդ իրականապէս թէ միայն սրտով ու դադափարով զրկուում է և այդ աստուածային շնորհքից, ուրեմն և իշխանութիւնից:

«Եւ արդ՝ զճր արդեօք իւր շնորհաց ու-

1. «Միայն մերս Հայաստանեայց Եկեղեցւոյ կաթուղիկոսութիւնն է, որ խորհրդական ձեռնադրութեամբ և միւսոնի օծմամբ կարուի, որով և նուիրեալն յայդ աստիճան՝ կրօնական առաւել իրաւունք քան զհասարակ Եպիսկոպոսունս: Այդ պայմանին զօրութեամբ Հայոց Հայրապետն է միայն որ կարող է անուանիլ օծեալ Հայրապետ: Օրմանեան. Աթոռ Հայաստ. էջ. 89:

1. Գիրք Հարցմանց. էջ. 537. 546: 2մոման հատոր. էջ. 662:

2. Գործք. Ը, 15:

նիցին) որք յԱհարօնեանն զլսոյ օտարացեալք են կամ թէ զոր կամակորութեամբն մերկացան՝ բաժանեալք և որոշեալք ի շնորհաց, զիսորդ կարիցեն զյինքեանց կորուսեալն այլոց ընձեռել»¹

Այս սկզբունքը քրիստոնէական Եկեղեցու հիմնաքարն է, առանց որի չի կարող նա գոյութիւն ունենալ² ինչպէս որ չի կարող գոյութիւն ունենալ առանց եկեղեցականութեան: Եկեղեցին այս աւանդական շնորհաց ընդունելութեամբ է հիմնադրուում ինչպէս որ Հին-Կաթողիկէ կոչուած համայնքն՝ անջատուելով Հռովմից 1870 թուին, հետամուտ եղաւ Հայոց Եկեղեցուց ստանալ աւանդական ձեռնադրութիւն, բայց յետոյ մօտիկութեան պատճառով զիմեց ի Հոլլանդիա:

Ահա ուրեմն այսպէս մեծ է և հիմնական է Կաթողիկոսի նշանակութիւնը Հայաստանեայց Ս. Կարգի համար և ոչ մի այլ ինչով չի կարելի բնաւ փոխարինել:

Որչափ նշանաւոր է Կաթողիկոսն Եկեղեցու համար, այնքան ևս որոշ է նորա իշխանութիւնն և իրաւասութիւնը: Պէտ առաքելական կանոններում, որոնք ընդունուեցան Շահապիվանի ժողովում (Ն դար), յիշուում է այդ այսպէս. «Կաթողիկոսն դէտ և զլու ի և օրէնսդիր լիցի ժողովրդեանն, զի ըստ բերանոյ նոցա վճարեցի ամենայն ինչ, որպէս Մովսիսին և Ահարօնին էր»:

Այս սկզբունքն անխափան պահուեց Հայոց Եկեղեցում Գ. դարից սկսեալ շարունակ և մենք տեսնում ենք, որ Կաթողիկոսի հրամանը «Բարձր հրաման» էր կոչուում, նորա հրամանի հետ իջնում էր և «շնորհք ողորմութեան Աստուծոյ յերկնից» ժողովրդի վրայ և ով այս հրամանին «հակառակ լիցի, նա այնպիսին է ընդ անիծիւք ներքոյ բանադրանաց, զանէ՛ծան Կայնի առցէ յԱստուծոյ, զմասն Յուդայի և խաչահանուացն»:

Այս ցուցումը տեսնում ենք Խաչիկ Ա-ի կոնգակի մէջ ամփոփուած:³

Այս բոլորն արտայայտուում է հէնց Կաթողիկոս բառով. «Եւ անունն իսկ, ասում Յակոր Ժպատեցի «իմաստաւէր զիտնաւորք» ի դարում խրատեցէ զքեզ, որպէս և երկնային պետութեանցն, որ վերագոյնան ճառեցան. զի եպիսկոպոս տեսուչ, և Կաթողիկոս առ բոլորեսին պետաւորեալ ունի զանուն, զի զլու ի է եպիսկոպոսացն ամենեցուն, որպէս Կաթողիկէ անուանեալ թուղթն, զի ոչ մասամբ առ մի գաւառ կամ քաղաք, այլ ընդհանուր տիեզերաց»:

Կաթողիկոսի իրաւասութեան սահմանն այնքան ընդարձակ է, որ մինչև անգամ եկեղեցական ժողովներն ոչ մի նշանակութիւն չունին եկեղեցական կարգադրութեանց համար առանց նորան: Այդպիսի դէպքերում նա է ժողով զումարողը, նորանն է վճռական ձայնը, մինչդեռ ժողովականք լոկ խորհրդատուներ են և վճիռը յայտարարողը դարձեալ Կաթողիկոսն է և ոչ ժողովը: Ժողովականք համարուում են միայն նորա ակթոակիցք: Վասնորոյ երբեք չէ եղել մի դէպք, որ Կաթողիկոս չեղած ժամանակ մի կարգադրիչ ժողով զումարուէր, և զիտնեք դէպքեր, երբ վախեցել են վճռական կարգադրութիւն անել առանց Կաթողիկոսի, զորօր. Վրաց բաժանման նըկատմամբ: Ահա և տեսնում ենք, որ Կաթողիկոսը ինքնիշխանութեամբ էին հրամայում յիշելով և իւրեանց ակթոակիցներին, որոնք համարուում էին նոցա զղայարանքները: Մերսէս Գ. ստորագրում է ի, դարում այսպէս. «Ես Սերսէս շնորհիւն Աստուծոյ՝ նուաճա Կաթողիկոս Հայոց վասն վերադրեալ կանոնիս ամենայն ակթոակիցօք մերովք ս. եպիսկոպոսովք Հայոց ձեռնարկեալ կնքեցաք ըստ հրամանի և սահմանի Հոգւոյն Սրբոյ և ընտրելոյ Աստուծոյ»:

Այդ սրբադուում է Դրիգոր Տղայի խօսքերով. նա ասում է իւր թղթում առ արևելեան եկեղեցականք. «աչք էք՝ զլսոյս լուսա-

1. Ընդհանրական. Էջ. 67: 2. Տես. եւ Ս. Գ. Տաթևացի. 2-րան հատոր Էջ. 674:

3. Արարատ 1868:

1. Գրչագիր № 100:

2. Կանոնագիրք:

առաջ և ձեռք՝ մարմնոյս կերակրիչքս բան և ձայն չեղուն շարժողի ... » 1

Սոյնն ասում է և Ս. Ներսէս Շնորհալին՝ «որպէս զլուսն միայն առանց բոլոր անձին անդամոց օժանդակութեան ոչ է կարող ներգործութիւնս ինչ կատարել նոյնպէս և մեզ ... » 2

Իսկ ա. Գլխի և իւր որդիներն յարարեալութեան մասին զեղեցիկ որոշումներ է տալիս Պետրոս Գեաղարքի զիտնական բարեկամ Գրիգոր Մաղիստրոսը. նա զրուժ է իւր թղթերի մէջ. «Թէպէտ և ըստ զեղեցիկ խնդրոյ քումը լուստոյալութեան՝ պէտք է լինէր որպէս զայն և զիւր աստիճանն՝ պարտ վարկանիս երկարագոյն սրագոյն բանս իմաստասիրել ծառայի քումն որով զուարճանաս իրր զհայր ի վերայ որդւոց »:

Գրիգոր Մաղիստրոս որոշում է և Հայրապետի զլուսն լինելու որպիսութիւնն ասելով.

«Արդ թողից զայսոսիկ նախագրութիւն մակարել մեծագունից զլիւնոյ որ ասէինք է. Բանն և զանազան անհոգի և զանազան համեմատ սրով բէականն մականունութեան ... »: Կամ

«Արդ դու ո՞վ ամենալուսն հաւատոցն Քրիստոսի և վախճան ... » «ով աստուածայինը զլուսն »: «փոխան Յիսուսի »: «Յաւեա ծայրացիելոյ բոլոր լրութեան Կաթողիկէ Նիկիեցւոյ՝ մշտափայլ ճառագայթից ըղձամ տոչորել ... »:

Ի հարկէ այս ամենն լոկ զոգանջիւն կղանոյ նոյա համար՝ որոնք հաւատք չունին և չորացած են աստուածային շնորհաց համար: Վասնորոյ և նոյն Մաղիստրոս զրուժ է զիսորդարար.

«...» Զայսոսիկ հիմն հաւատոց հաստատէ, այլ առ հաւատացեալը Աստուծոյ Բանին է հաւատալ փան զի ի մէջ Քրիստոսաւորացի է բանդ, որով սպառազինեալ զօրավարդ՝ փառելով վահանաւորեալ անվանող ի նեախն մնացեալ զաղանի, առեալ աւար տացես մեզ կապուտ և զսատարեալք հարցն և ցանկ ամ

բացուցես քոյինդ անքուն ակամբ նոր նորոգեալ ի հաւատ առեալ քան զԱրահա մուն ... »:

Ուրեմն Կաթողիկոսը զլուսն լինելով իւր հաւատացելոց մէջ բառի բուն նշանակութեամբ անշուտ գործ է ածում իւր զգայաբաններն և ինքնիշխանարար գործում: Իսկ նորա զգայարանները չեն կարող բնաւ գործել ինչ առանց զլիս նախորդ հրամանին. այդ պէտք է տեսնելք և յետոյ:

(Հարունակելի)

Ա. ՏԵՐԱԴԻՔԵԼԵԱՆ.

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԿԱՅԻՆԻ ՊԱՏԱՍԻԱՆԸ.

(ԲԵՐՈՒԷԻՑ)

- Եւ ասէ Տէր Աստուած ցկային. ո՞ր է
- Հաքել եղբայր քո. եւ նա ասէ. չգի-
- տնմ. Միթէ պահապան իցնմ եղբորն
- իմոյ »:

(Ծն. Դ. 9.)



որպոյնեք այսօր Դուք լուծէք առաջին եղբայրասպանի խօսքերը: Ո՞րպիսի տարբերութիւն սպանութեան մնայլ տեսարանի և աշխարհի ստեղծագործութեան պատմութեան մէջ, որ նրանից համարեայ մի փոքր առաջ միայն ընդառաջել էր: Աշխարհի ստեղծագործութեան մէջ, Աստուածային նախորդմանութեամբ, ըստ ամենայնի նկատելի է խաղաղութիւն, ներդաշնակութիւն, լոյս: Երեւում էր, որ մարդկային ցեղը կմեծանայ և կարգանայ անդաւաճան սիրոյ և համերաշխու-